

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՆԻՍԻ

Մասնակցությամբ՝

«Արմավիրի մարզպետի տեղակալներ՝

Լ.Մուրադյանի

Մ.Քարտաշյանի

Գ. Գաբրիելյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ղեկավար՝

Փ. Կարապետյանի

«Արմավիր» ԶՕԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար

Ա.Մկրտչյանի

«Շենիկ» ԶՕԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնակատար

Ս.Սարգսյանի

«Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրարվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017թվականի
հոկտեմբերի 27-ի նիստի օրակարգը հաստատելու մասին.

/Ա. Ղահրամանյան- «Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական
եկամուրների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի
մարման գործընթացը առ 25.10.2017թ դրությամբ:

/Վ. Մկրտչյան- «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ/

3. «Ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային
գործակալությանը «Արմավիրի մարզում 2017 թվականի ընթացքում մասնավոր
կառուցապատողների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ
համայնքների ղեկավարների կողմից ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու
պահանջի մասին:

/Ս. Թովմասյան - «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ /

4. ՀՀ Արմավիրի մարզում 2017 թվականին իրականացվող այգեթաղի և աշնանացան ցորենի ցանքսի հետ կապված աշխատանքների ընթացքի ու առկա խնդիրների մասին:

*/Ա.Այվազյան- ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ/*

5. Հայտարարություններ

Համապատասխան ձևաչափով գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին, կապված ՀՀ փարածքային կառավարման և զարգացման նախարարի 13.10.2017թ N01/15.1/6597-17 հանձնարարականի հետ:

*/Ա.Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ/*

Մինչև օրակարգային հարցերին անցնելը ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը անդրադառնալով մարզի խորհրդի նիստերին համայնքների ղեկավարների բացակայություններին, նշեց երևույթի անույլարելի լինելը և հանձնարարեց մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի պաշտոնակատար Գ.Հովհաննիսյանին՝ ապահովել մարզի խորհրդի նիստերին բոլոր համայնքների ղեկավարների մասնակցությունը, իսկ բացակայությունների դեպքում ներկայացնել բացակայությունների պատճառների վերաբերյալ համապատասխան զեկուցագրեր:

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 –րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2017թվականի հոկտեմբերի 27-ի նիստի օրակարգը::

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզում սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 25.10.2017թվականի դրությամբ: Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 2033354,3հազար դրամի դիմաց կազմել են 1699182,1 հազար դրամ, կատարողականը՝ 83,6 տոկոս:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 0,2 տոկոսով:

Վ. Մկրտչյանը ըստ համայնքների ներկայացրեց սեփական եկամուտների հավաքագրման 100 տոկոս և բարձր, ինչպես նաև՝ 50 տոկոսից ցածր ցուցանիշները/տեղեկատվությունը կցվում է/: Մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետը ներկայացրեց նաև համայնքներում աշխատավարձերի մարման գործընթացը՝ տեղեկացնելով, որ 25.10.2017 թվականի դրությամբ աշխատավարձի պարտք ունի թվով 16 համայնք, և այն կազմում է 21263,9 հազար դրամ/տեղեկատվությունը կցվում է/:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը, անդրադառնալով սեփական եկամուտների 50 տոկոսից ցածր սեփական եկամուտներ հավաքագրած համայնքների ղեկավարներին առանձին-առանձին, փաստեց, որ շատ համայնքներում ստեղծված իրավիճակը կախված է նաև համայնքների ղեկավարների անգործությունից, որը միանգամայն անընդունելի է և հորդորեց նրանց ամենօրյա աշխատանք փնտրել ստեղծված իրավիճակը շտկելու և տարին առանց աշխատավարձի պարտքի և սեփական եկամուտների հավաքագրման՝ համայնքի բյուջեով պլանավորված ցուցանիշների կատարումն 100 տոկոսով ապահովելու համար: Նա առաջարկեց համայնքների ղեկավարներին հողի հարկի պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձանց խոշոր պարտքերի բռնագանձման վերաբերյալ սեղմ ժամկետում համապատասխան հայցեր ներկայացնել դատարան: Մարզպետն առաջարկեց նաև համայնքների 2018 թվականի բյուջեները կազմելիս համապատասխան գումարներ նախատեսել համայնքներում աղքատիության աշխատանքներ իրականացնելու և խմելու ջրի մատակարարման համար՝ «Վիոլա Ջուր» ՓԲԸ ի հետ պայմանագրեր կնքելիս, «Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի հետ համագործակցված, առավել ուշադրություն դարձնելով դրանց իրավական ձևակերպումների նկատմամբ:

«Արմավիրի մարզի սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարները պարտավորվեցին մինչև տարեվերջ անել հնարավորը՝ շոշափելի արդյունքներ արձանագրելու համար:

Օրակարգային երրորդ հարցի՝ «Ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալությանը «Արմավիրի մարզում 2017 թվականի ընթացքում մասնավոր կառուցապարտողների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու պահանջի մասին զեկուցեց «Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ս.Թովմասյանը: Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ Ս.Թովմասյանն իր զեկույցում անդրադարձավ «Ազգային վիճակագրական ծառայության /ԱՎԾ/ Արմավիրի մարզային գործակալությանը 2017թվականի ընթացքում մասնավոր կառուցապարտողների կողմից իրականացված

աշխատանքների վերաբերյալ համայնքապետների կողմից ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու պահանջին՝ ընդգծելով, որ տվյալների միասնական և հուսալի բազա ստեղծելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի համայնքներից մարզպետարան ներկայացվող տեղեկատվությունը համապատասխանի ԱՎԾ-ի Արմավիրի մարզային գործակալության տվյալներին:

Անդրառնալով օրակարգային հարցին՝ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը նշեց, որ շատ հաճախ համայնքներից մարզպետարան ներկայացված տեղեկատվությունը լինում է ոչ լիարժեք և չի համապատասխանում համայնքերում կատարվող շինարարական աշխատանքների ծավալների քանակին և իրականացվող մի շարք աշխատանքներ դուրս են մնում ներկայացված տեղեկատվությունից: Նա առաջարկեց համայնքների ղեկավարներին այսուհետև ամբողջությամբ հաշվառել համայնքում կառուցապարտողների կողմից իրականացվող շինարարական աշխատանքները և համապատասխան տեղեկատվությունը ներառել նաև համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունում:

Օրակարգային հարցի առնչությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը **հանձնարարեց ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Մ.Քարտաշյանին՝ համայնքերում իրականացնել այցելություններ ներկայացված տեղեկատվությունների խսկությունը ճշտելու նպատակով՝ որ կվերաբերի և իրականացվող և կասեցված շինարարություններին՝ գործընթացի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզպետին:**

Օրակարգային չորրորդ հարցով՝ ելույթ ունեցավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա.Այվազյանը՝ ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզում 2017 թվականին իրականացվող այգեթաղի և աշնանացան ցորենի ցանքսի հետ կապված աշխատանքներն ու առկա խնդիրները: Նա մասնավորապես նշեց, որ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 15532,4 հեկտար բազմամյա փնկարկ, որից 6881,6 հեկտարը՝ խաղողի այգի: Նրա տեղեկացմամբ՝ բնակլիմայական պայմաններով պայմանավորված խաղողի մշակությունը մարզում իրականացվում է պարտադիր այգեթաղի պայմաններում: Առ այսօր մարզում իրականացվել է 295 հեկտար այգեթաղ և 1217 հեկտար աշնանացան: Ենելով բնակլիմայական պայմաններից և աշնանացանի կատարման օպտիմալ ժամկետից՝ Ա.Այվազյանն առաջարկեց համայնքներում հնարավորինս արագացնել համապատասխան աշխատանքների կատարումը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 13.10.2017թ N01/15.1/6597-17 հանձնարարականի հետ կապված Ա.Այվազյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին համապատասխան ձևաչափով գյուղատնտեսական մշակաբույսերի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարան: Ա. Այվազյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին խնդիրներ առաջանալու դեպքում դիմել

մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն՝ համպարասխան խորհրդարվություն ստանալու համար:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապարասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ



Արձ.՝ Մ. Առուշանյան